# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

**«ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով բենզինի գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի**

**Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 28.12.2017թ. ժամը 09:30-ին Էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:**

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Կարախանյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Աղայանց /գնահատող/

Հ. Տոնոյան /գնահատող/

Ա. Խաչատրյան /բացող/

Հ. Գրիգորյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյան

**Հայտերի բացման և գնահատման մասին**

**1. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

1.1 ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Հասցեները | Էլ. հասցեները |
|---|---|---|---|
| 1 | <<ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն>> ՍՊԸ | Նաիրի Պուշկինի 1 | tender@cps.am |
| 2 | <<Ֆլեշ>> ՍՊԸ | ք. Երևան, Ե. Կոչարի 30 | flashltdtender@gmail.com |

**2. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

**3. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

3.1 <<ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.2 <<Ֆլեշ>> ՍՊԸ-ի ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթեր՝ բացակայում են հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերը /հավելվածները/, ներառյալ գնային առաջարկը:

**4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

4.1 <<ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

**5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

5.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

| Չափա բաժին | Նախահաշվային գինը, ՀՀ դրամ | Մասնակիցների անվանումները | | | |
|---|---|---|---|---|---|
| | | <<ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն>> ՍՊԸ | | <<Ֆլեշ>> ՍՊԸ | |
| | | Առաջարկված գները, ՀՀ դրամ | | | |
| | | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ |
| 1 | **3999375** | 3754687.5 | 4505625* | - | - |
| 2 | **4588125** | 4333229.17 | 5199875* | - | - |

**գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը*

**6. 1-2-րդ չափաբաժինների համար միաժամանակյա բանակցությունների կազմակերպման մասին**

1-2-րդ չափաբաժինների մասով՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և հրավիրել <<ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն>> ՍՊԸ-ին հայտով ներկայացված գնի նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների 09.01.2018թ ժամը 10:00-ին ք. Երևան, Կառավարական տուն 2, 308 սենյակ հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 09.01.18թ ժամը 10:00-ին:**

**8. 1-2-րդ չափաբաժինների համար հայտ ներկայացրած մասնակցի հետ միաժամանակյա բանակցությունների վարման մասին.**

8.1 <<ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն>> ՍՊԸ-ի ներկայացուցչի բացակայության պատճառով վերջինիս կողմից 1-2-րդ չափաբաժինների համար հայտով առաջարկված գները թողնել անփոփոխ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

8.2 Հիմք ընդունելով սույն արձանագրության 8.1-րդ կետը՝ մերժել <<ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն>> ՍՊԸ-ի հայտը 1-2-րդ չափաբաժինների մասով, հաշվի առնելով, որ մասնակցի գները գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

8.3 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3.2 կետը՝ մերժել <<Ֆլեշ>> ՍՊԸ-ի հայտը՝ հրավերով սահմանված պահանջներին չբավարարելու հիմքով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

8.4 Հիմք ընդունելով սույն արձանագրության 8.2-րդ և 8.3-րդ մասերով ընդունված որոշումները՝ շարունակել հայտերի գնահատման գործընթացը ARMEPS համակարգով՝ էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան:

**9. Գնահատման արդյունքների մասին.**

9.1 Գնման գործընթացը հայտարարել չկայացած 1-2-րդ չափաբաժինների մասով՝ համաձայն ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի՝ հայտերից ոչ մեկը հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**Գնահատող հանձնաժողով՝**

Մ. Կարախանյան /նախագահ/

Մ. Աղայանց

Հ. Տոնոյան

Ա. Խաչատրյան

Հ. Գրիգորյան

Ա. Մարգարյան /քարտուղար/